ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

27.12.2017 թ.
Ելք 046/138
Lusaghbyur.lori@mta.gov.am ,
հեռ. 093-34-47-89

ՀՀ Լոռու մարզպետ
պարոն՝ Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն մարզպետ՝

Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզի Լուսաղբյուր համայնքի ավագանու թրվ 22-27-Ն որոշումները:

Առդիր 14 էջ:

ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լուսաղբյուր համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լուսաղբյուր, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 22

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը, համայնքի ավագանին՝
ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն Լուսաղբյուր
համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-046-0229-0002 ծածկագրով 1.03675 հա, 06-046-0229-0003 ծածկագրով 0.53637հա, 06-046-0229-0004 ծածկագրով 9.50424 հա, 06-046-0229-0005 ծածկագրով 0.52917 հա, 06-046-0229-0006 ծածկագրով 1.03675 հա, 06-046-0229-0007 ծածկագրով 1.0259 հա, 06-046-0229-0008 ծածկագրով 1.04404 հա, 06-046-0229-0009 ծածկագրով 1.36793 հա, 06-046-0229-0010 ծածկագրով 3.8878 հա, 06-046-0229-0011 ծածկագրով 1.02595 հա, 06-046-0229-0012 ծածկագրով 0.54357 հա, 06-046-0229-0013 ծածկագրով 0.54996 հա, 06-046-0229-0014 ծածկագրով 0.52197 հա գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի անջրտի վարելահողերը 25 տարի ժամկետով վարձակալությամբ տրամադրելուն:
2. Սահմանել տարեկան վարձավճարի մեկնարկային գին՝ 06-046-0229-0002 ծածկագրով 1.03675 հա հողամասի համար 4300 ՀՀ դրամ, 06-046-0229-0003 ծածկագրով 0.53637հա հողամասի համար 2200 ՀՀ դրամ, 06-046-0229-0004 ծածկագրով 9.50424 հա, հողամասի համար 39000 ՀՀ դրամ, 06-046-0229-0005 ծածկագրով 0.52917 հա հողամասի համար 2200 ՀՀ դրամ,06-046-0229-0006 ծածկագրով 1.03675 հա հողամասի համար 4300 ՀՀ դրամ,06-046-0229-0007 ծածկագրով 1.0259 հա հողամասի համար 4300 ՀՀ դրամ,06-046-0229-0008 ծածկագրով 1.04404 հա հողամասի համար 4300 ՀՀ դրամ,06-046-0229-0009 ծածկագրով 1.36793 հա հողամասի համար 5600 ՀՀ դրամ, 06-046-0229-0010 ծածկագրով 3.8878 հա հողամասի համար 16000 ՀՀ դրամ,06-046-0229-0011 ծածկագրով 1.02595 հա հողամասի համար 4300 ՀՀ դրամ,06-046-0229-0012 ծածկագրով 0.54357 հա հողամասի համար 2300 ՀՀ դրամ,06-046-0229-0013 ծածկագրով 0.54996 հա հողամասի համար 2300 ՀՀ դրամ,06-046-0229-0014 ծածկագրով 0.52197 հա հողամասի համար 2300 ՀՀ դրամ:
3.Մրցույթի մասնակցության վճարը 2000 ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:
4. Համայնքի ղեկավարին՝ ապահովել վարձակալության իրավունքով տրամադրվող հողամասի հայտարարության հրապարակային ծանուցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԼԱՐԻՍԱ
2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԳԱՄ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՉԳԵՆ

4. ՄԱԴՈՅԱՆ ԳԱՐԻԿ

5. ՅԱՅԼՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄԱՅԻՍ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լուսաղբյուր համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լուսաղբյուր, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 23

ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 25-ի <<Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Լուսաղբյուր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը հաստատելու մասին>> թիվ 8-Ա որոշմամբ հաստատված կարգի 16-րդ, 16.2-րդ կետերով հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի 2017թ դեկտեմբերի 12-ի թիվ 5 եզրակացությունը՝
Լուսաղբյուր համայնքի ավագանին որոշում է՝

1.Բարելավել համայնքի բնակիչների դիմումները համայնքի բյուջեից համայնքի նորածին երեխաների ծնողներից մեկին, համայնքի մահացած բնակիչների հարազատներին, սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԼԱՐԻՍԱ
2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԳԱՄ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՉԳԵՆ
4. ՄԱԴՈՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ՅԱՅԼՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄԱՅԻՍ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լուսաղբյուր համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լուսաղբյուր, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 24

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՄՍԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով քվիարկումից և առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8–կետի պահանջներով Լուսաղբյուր համայնքի ղեկավարի վարձատրության չափը Լուսաղբյուր համայնքի ավագանին

որոշում է

1. Հաստատել Լոռու մարզի Լուսաղբյուր համայնքի ղեկավարի ամսեկան աշխատավարձի չուփը 330. 000 (երեք հարյուր երեսուն հազար) դրամ:
2. Ուժը կորցրած ճանաչել Լուսաղբյուր համայնքի ավագանու 2016թ-ի դեկտեմբերի 1-ի թիվ 37 որոշումը;
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԼԱՐԻՍԱ
2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԳԱՄ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՉԳԵՆ
4. ՄԱԴՈՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ՅԱՅԼՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄԱՅԻՍ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լուսաղբյուր համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լուսաղբյուր, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 25-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերով, << Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ և 72-րդ հոդվածներով և << Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի առաջին կետի բ ենթակետի՝ Լուսաղբյուր համայնքի ավագանին

Որոշում է՝

1. Հաստատել Լուսաղբյուր համայնքի ղեկավարի վարձատրության չափը և գյուղապետարանի աշխատակիցների թվաքանակը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը :
2. Ուժը կորցրած ճանաչել Լուսաղբյուր համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 01-ի թիվ 38 որոշումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԼԱՐԻՍԱ
2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԳԱՄ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՉԳԵՆ
4. ՄԱԴՈՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ՅԱՅԼՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄԱՅԻՍ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված
Լոռու մարզի Լուսաղբյուր համայնքի ավագանու
2017թ. դեկտեմբերի 26-ի թիվ 25-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 11
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հաստիքի անվանումը	հաստիքային միավորի թիվը	պաշտոնային դրույքաչափը / հազար դրամ/
Համայնքի ղեկավար	1	330.0
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	110.0
Աշխատակազմի քարտուղար	1	140.0
Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ	1	120.0
Աշխատակազմի առաջատար մասնագետ	1	120.0
Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ	1	110.0
Աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ	2	105.0
Տեխսպասարկման անձնակազմ		
Վարորդ	1	100.0
Հավաքարար	0.5	100.0
Տեխնիկական աշխատող	1	100.0
Ընդամենը՝	10.5	1335.0

Լուսաղբյուր համայնքի ղեկավար՝ Ա. Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լուսաղբյուր համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լուսաղբյուր, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 26-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով
Լուսաղբյուր համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լուսաղբյուրի գյուղական համայնքի 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԼԱՐԻՍԱ
2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԳԱՄ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՉԳԵՆ
4. ՄԱԴՈՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ՅԱՅԼՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄԱՅԻՍ ՀԱԿՈԲՅԱՆ

Հաստատված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լուսաղբյուրի գյուղական համայնքի ավագանու
2017թ. դեկտեմբերի 26-ի թիվ 26-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

ա. Հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 4500 (չորս հազար հինգ հարյուր) դրամ.

ա. սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 9000 (ինը հազար) դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես շենքերի և շինությունների համար՝ 15000 (տասնհինգ հազար) դրամ,
-1000-ից և 3000ավելի քառակուսի մետր ընդհաուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 (տասնհինգ հազար) դրամ,
-3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհաուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 (երեսուն հազար) դրամ,

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

-մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000 (երեք հազար) դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 (հինգ հազար) դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 900 (ինը հարյուր) դրամ՝

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակոռույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստուգետնյա) շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբեկտների բանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 1500 (հազար հինգ հարյուր) դրամ:

4. համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60000 վաթսուն հազար դրամ.

5. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողերում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30000 երեսուն հազար դրամ.

6. համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 18000 տասնութ հազար դրամ.

7. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 6000 վեց հազար դրամ.

8. համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 15000 տասնհինգ հազար դրամ.

9. համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 3000 դրամ,

-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 3300 դրամ,

-51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 4500 դրամ,

-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 6300 դրամ,

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 7800 դրամ,

-500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 13800 դրամ,

Բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

-մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 3000 դրամ,

-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 3300 դրամ,

-51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 4500 դրամ,

-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում մինչև 6300 դրամ,

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 7800 դրամ,

-500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 13800 դրամ,

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 110 հարյուր տաս դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 1500 հազար հինգ հարյուր դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 7500 յութ հազար հինգ հարյուր դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 60000 վաթսուն հազար դրամ,

դ. խաղատների համար՝ 150000 հարյուր հիսուն հազար դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ 60000 վաթսուն հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ 30000 երեսուն հազար դրամ.

12) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 հազար հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 երեք հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4500 չորս հազար հինգ հարյուր դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 վեց հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 9000 ինը հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 տասնհինգ հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 300 երեք հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 600 վեց հարյուր դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1200 հազար երկու հարյուր դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2400 երկու հազար չորս հարյուր դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4500 չորս հազար հինգ հարյուր դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7500 յոթ հազար հինգ հարյուր դրամ.

13) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 600 վեց հարյուր դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1050 մեկ հազար հիսուն դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 450 չորս հարյուր հիսուն դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

14. համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 3000 երեք հազար դրամ

15. համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց 1000 (մեկ հազար դրամ) փոխհատուցման վճար:

16. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց 1000 (մեկ հազար դրամ) փոխհատուցման վճար:

17. համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց 1000 (մեկ հազար դրամ) փոխհատուցման վճար:

18. Աղբահանության վճարի դրույքաչափը՝

1. աղբահանության վճարը սահմանվում է՝

1) կենցաղային աղբի համար՝

Ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով բնատ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսեկան 100 դրամ:

2) առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50-ից 100 դրամ:

ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լուսաղբյուր համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լուսաղբյուր, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 27-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով Լուսաղբյուր համայնքի ավագանին

Որոշում է՝

1. Հաստատել Լուսաղբյուր համայնքի 2018 թվականի բյուջեն համաձայն թիվ 1-ից թիվ 6 հատվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԼԱՐԻՍԱ
2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԳԱՄ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՉԳԵՆ
4. ՄԱԴՈՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ՅԱՅԼՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄԱՅԻՍ ՀԱԿՈԲՅԱՆ